

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ս. Ս. ԲՈՒԴՅՈՆՆԻՅ

ԸՆՆԻՆԻ ԱՎԱՆԴՆԵՐԸ
ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՅԵՎ
ԿԱՐՄԻՐ-ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Թարգմ. առաւելեցից

ՀԱՅԿՈՈՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1929

1870
1871
1872
1873
1874

Ա. Մ. ԲՈՒԴՅՈՆՆԻՅ

ՅՔ 26
P-94
Lmy,
334
355(47)

Լ Ե Ն Ի Ն Ի ԱՎԱՆԴՆԵՐԸ
ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՅԵՎ
ԿԱՐՄԻՐ-ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Թարգմ. ուսանելից

ՀՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՅ
ԳՐԱԳԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ՏՊԱՐԱՆ Հ Ե Ր Մ Ե Ս
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. № 1749բ.
ՏԻՐԱԺ 3000

Պ Ա Ր Զ Ա Ճ Ո Ւ Մ Ը

«Իսկապես մեզ մտտ, քանի վոր պետական իշխանությունը գտնվում է բանվոր դասակարգի ձեռքին, քանի վոր այդ պետական իշխանությանն են պատկանում արտադրության բոլոր միջոցները, մեզ մտտ, իսկապես, մնացել է ազգաբնակչության կոոպերացման խնդիրը: Ազգաբնակչության ամենամեծ չափով կոոպերացման յենթարկելու պայմանով ինքնըստինքյան նպատակին է հասնում այն սոցիալիզմը, վորն առաջնորդում որինական ծաղր, ժպիտ, արհամարհական վերաբերմունք եր առաջ բերում իր վերաբերմամբ այնպիսի մարդկանց կողմից, վորոնք արդարացի կերպով համողված են ին դասակարգային կռվի անհրաժեշտության, քաղաքական իշխանության համար տարվող կռվի անհրաժեշտության մեջ»: (Լենին. VIII հատոր, II մաս., յերես 139):

Մեր կոմունիստական կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը ի դուր չե, վոր այնքան մեծ ուշադրություն են դարձնում կոոպերացիային, այդպես է արվում այն պատճառով, վոր մեր յերկրում սոցիալիզմի կանոնը մնա առանց ազգաբնակչության լայն մասսաներին կոոպերացիայի մեջ ներդրվումը՝ հնարավոր չի:

Միայն կոոպերացիայի միջոցով է հնարավոր մեր փոքր տնտեսության տեր գյուղացուն, մեր մանր տնայնագործին սոցիալիստական հասարակության շինարարությանը մասնակից դարձնել:

Վ. Ի. Լենինն մեր յելույթներում այս բազմաթիվ անգամ է ընդգծել: Այդ յերևում է հենց որինակ նրա հետևյալ խոսքերից. «Լրիվ կոոպերացման պայմաններում մենք յերկու վտարով արդեն կանգնած կլինեինք սոցիալիստական հողի վրա»:

Մի այլ տեղ նա ասում է. «կոոպերացիայի հասարակ աճումը մեզ համար նույնն է, ինչ վոր սոցիալիզմի աճումը»:

Այսպիսով մենք տեսնում ենք թե ինչպիսի բացառիկ նշանակութուն էր տալիս Լենինը կոոպերացիային:

Արդյոք ազգարնակության կոոպերացման ընագավառում ունենք մենք նվաճումներ: Այո, ունենք: Մակայն մենք դեռ շատ մեծ աշխատանք պիտի տանենք, վոր բոլորը հասկանան այդ աշխատանքի ուժեղացման անհրաժեշտութունը,

ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒՄԵԼԻ ՅԵՆ

«Մեզ մնում է դեռ ելի մի քիչ աշխատել «քաղաքակիրթ» (ամենից առաջ գրագետ) յիվրոպացու տեսակետով, վորպեսզի բոլորին ստիպենք գլխովին մասնակցել, և մասնակցել վոչ թե պասսիվ կերպով, այլ ակտիվորեն, կոոպերատիվ գործարքների մեջ»:

Յեւլ ապա.—

«Իսկապես աս. ծ, մեզ «միայն» մի բան է մնացել. մեր ազգարնակութունն այնքան «քաղաքակիրթ» դարձնել, վոր նա իսկական կոոպերացիային գլխովին մասնակցելու բոլոր ձեռնավորութունը և գլուխ բերի այդ մասնակցութունը: «Միայն» այդ: Յեւլ սոցիալիզմին անցնելու համար մեզ ուրիշ իմաստութուն»:

ներ այժմ հարկավոր չեն: (Լենին, VIII հատոր, յերես 141.)

Այսպես եր մոտենում Լենինն ազգաբնակութեան իրական կոոպերացման խնդրին:

Մենք ել այդպես պետք է նայենք կոոպերացիայի լայն մասսաների ընդգրկման անհրաժեշտութեանը: Առջ միայն բանվորների, գյուղացիների կոոպերացումը, այլ և բանակի ու նավատորմի մարտիկների կոոպերացումը, այլ և նրանց կոոպերատիվ ամենորյա աշխատանքին գործնականորեն մասնակից անելը— այս խնդիրն է, վոր այժմ մեր առաջ դրված է: Մնացածն ինքն իրեն կդասավորվի: Միշտ պետք է հիշել Լենինի խոսքերը՝ թե «սոցիալիզմին անցնելու համար մեզ այժմ ուրիշ իմաստութեություններ հարկավոր չեն»:

Լուծելի յե արդյոք այդ խնդիրը, կարո՞ղ ենք արդյոք ամբողջ ազգաբնակությունը գլխովին կոոպերացման յենթարկել: Կարո՞ղ ենք արդյոք իրականացնել այն, վոր ազգաբնակությունը գլխովին մասնակից դասնա Վրջ թե պասսիվ կերպով, այլ ակտիվորեն կոոպերատիվ գործարքների մեջ»: Այո: Այդ խնդիրը լուծելի խնդիր է: Լենինը յերբեք մեր հնարավորութեանները մոռացութեան չեր տալիս: Նա հասկանում էր, վոր մեր կյանքի վերակառուցման ճանապարհին, դեպի սոցիալիստական հատարակությունը տանող ճանապարհին մեծամեծ դժվարություններ կան: Սակայն նա հրամայաբար պահանջում էր, վոր կուսակցությունը ընդունած խնդիրները անշեղ կերպով կատարվեյին:

Ահա թե ինչու մենք կարծում ենք, վոր Իլյիչի ամեն մի բառը, վոր մենք կենսապորժում ենք, մեր հետագա աշխատանքի համար ջատ հարուստ նյութ

կտաւ Լենինի խոսքերը մի աղբյուր են, վորից մենք հեղափոխական գործնական ու տեսական տվյալներ ենք ձեռք բերելու:

Մասնավորապես մեզ այստեղ հետաքրքրում են նրա «բարձր սարերը յիշնելու մասին», «հուսալքութեան փնասակարութեան մասին», «առևտրի ոգուտի մասին», «վերաբերմունք դեպի կարմիր Բանակը», և այլն հոգվածները:

Իր ամեն մի հոգվածի մեջ Իլյիչը տալիս է անցյալի հանրագումարները, վորպեսզի ապագայի համար ճանապարհներ նշի: Նա յերբեք «ընդհանրապես» վոչ գրում էր, վոչ ել խոսում: Հենց այդ պատճառով այն ամենը, վոր նրա գրչիցն է յիշել, մեզ համար պետք է գործունեյութեան հրահանգի տեղ ընդունվի, մի ինքնահատուկ «հրաման», վոր Լենինը տվել է աշխատավորներին բանակին:

ԴԵՊԻ ԼԵՌՆԱԿԱՏԱՐՆԵՐԸ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ

«Բարձր լիռները յիշնելու մասին» հոգվածը տալիս է հեղափոխութեան փառահեղ, նույն իսկ զուտ դեղարվեստական կողմից, նկարագիրը մի ակիբից մինչև հետեյալ ակիբի մեջ յիդած ընդամիջման շրջանում:

Ռուսական և միջազգային պրոլետարիատը հասել են այնպիսի բարձունքների, վոր նախորդ սերունդների համար չտեսնված է, սակայն լեռնակատարի ամենաբարձր գագաթին հասնել ուղիղ ճանապարհով անկարելի յէ. հարկավոր էր վար իջնել, վորպեսզի շրջապտույտ ճանապարհով նորից լեռնակատարին հպանենք: «Հուսալքութեան բոպենները» հենց այդ վար

Խջնելու ժամանակն են սկսվում, մանավանդ յերբ ներքեից լսվում են թշնամիների հրձվանքներն.— Հ'ը մենք ձեզ չհյլնք ասում.— այդքան բարձր մի գնացեք: Անխելքներ, ուղում եյիք լեռնակատարներին հասնել, այժմ հեռ-հեռ նք գալիս դեպի ցած... Ինչո՞ւ չհյիք մեզ լսում: Չե՞ վոր մենք ձեզ խորհուրդ եյինք տալիս՝ այդքան բարձր չելնել, այսպես են ասում թշնամիները: Յեվ Իլլիչը նրանց սլատասխանում ե իրեն հատուկ շեշտակի խոսքերովը՝ այն մասին, թե «մենք ինչ նվաճումներ ենք ունեցել ու դրանցել»: Առաջինը՝ մենք բուրժուա—դեմոկրատական հեղափոխությունը այսպես «մաքուր» ենք կատարել-վերջացրել, վոր մեզ նման վոչ վոք չի արել: Յերկրորդ՝ մենք համաշխարհային ամենահետադեմ իմպերիալիստական պատերազմից յիւք գտել ենք և պատերազմը վերջացրել հեղափոխական ճանապարհով: Յերրորդ՝ մենք ստեղծել ենք պետության խորհրդային տիպը և հենց դրանով սկսել ենք համաշխարհային պատմության մի նոր ժամանակաշրջան. մի շրջան, յերբ պրոլետարիատի պետությունը յեկել ու փոխարինում ե բուրժուգիայի պետությանը: Կարճից ե արդյոք վորեւե մեկը հեռ խլել մեզնից այդ նվաճումները: Ահա այն բարձունքները, վորոնց մենք հասել ենք: Մակայն ավելի վերը, ավելի բարձր նրանք կարող են հասնել, ովքեր կարող են, յիթե անհրաժեշտ լինի, «սկզբից սկսել» դժվարագույն խնդիրների իրականացումը:

Մենք այսպես մանրամասն ենք կանգ առնում լենինի հանրածանոթ հողվածի վրա, վորովհետև մենք այդ հողվածում տեսնում ենք հեղափոխության խնդրի

լենինյան դրույթի մեր ճիշտ հասկացած ըմբռնողության հաստատությունը:

Պրուլետարական դիկտատուրայի պայմաններում կասկած չի կարող լինել այն մասին, վոր մենք նվաճած բարձունքներից ավելի վեր կարող ենք բարձրանալ և վոր հոկտեմբերյան նվաճումների վերջնական հաղթանակը մեզ համար ապահովված է:

Իհարկե, մեր առաջ դուռն շատ փորձություններ կան: Դեպի սոցիալիզմ տանող ճանապարհին մենք կարող ենք և դժվարությունների հանդիպել: Սակայն թող մեռնող բուրժուազիայի և նրա հեռակից քարշյակող մանր-բուրժուական դեմոկրատիայի շներն ու խողերը մեզ վրա անհեծքների, հայհոյանքների, ծաղրի հեղեղներ թափեն այն բոլոր սխալների ու անհաջողությունների համար, վոր մենք ունենում ենք մեր խորհրդային կարգերի կառուցման ընթացքում: Մենք վոչ մի բոպե չենք մոռանում այն, վոր անհաջողություններ ու սխալներ մենք իսկապես շատ ենք ունեցել և շատ ենք անում: Ինչպե՞ս թե... Առանց սխալանքների ու անհաջողությունների մի՞թե կարելի չէ այնպիսի մի նոր, համաշխարհային պատմության համար նոր, գործ կատարել, վորպիսին է մինչև այժմ չտեսնված նոր տիպի պետություն ստեղծելու գործը: Մենք անշեղ կերպով կռիվ պիտի մղենք մեր սխալներն ու անհաջողությունները վերացնելու համար, խորհրդային սկզբունքների կիրառման շատ ու շատ թերություններին վերջ տալու համար: Սակայն, մենք իրավունք ունենք հպարտանալու և հպարտանում ենք, վոր մեզ է վիճակվել խորհրդային պետության

կառուցումն սկսելը, վորով համաշխարհային պատմության մեջ նոր դարագլխի սկիզբ ենք դրել.—մի դարագլուխ, յերբ իշխում հ, այն նոր դասակարգը, վոր բոլոր կապիտալիստական յերկրն երում ճնշված ե, վոր ամեն տեղ գնում է դեպի նոր կյանք, դեպի բուրժուազիայի վերջնական պարտությունը, դեպի պրոլետարիատի դիկտատուրան, դեպի մարդկության ազատագրումը կապիտալի, իմպերիալիստական պատերազմն երի լրծից՝ (ընդգծումն իմն ե. Ս. Բուդյոննի.—Լենին, VIII հատոր յերես 365):

ՊԱՇԱՐՎԱԾ ԱՄՐՈՑՈՒՄ

Լենինն ի վնաս թշնամիների, հակառակ թշնամի ուժերի, վորպես շատ փորձված տաղանդավոր նավաւար, խորհրդային նավին ամենաճիշտ ճանապարհն ե ցույց տվել։ Նա մեղ ցույց ե տվել թի ինչպես պետք ե կելի մղել հին, շահագործման վրա կառուցված, աշխարհի դեմ, ինչպես պիտի ամրացնել նոր կարգերը, համաշխարհային հեղափոխության նոր ամրոցը — խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը։

Կարմր եք արդյոք մենք, վորպես սոցիալիստական հայրենիք. գոյություն ունենալ կապիտալիստական պետությունների միջև։ Արդյոք մեղ չի՞ն խեղդի, յերբ համաշխարհային ավաղակ-իմպերիալիստները նոր

պատերազմ սկսեն: Այս հարցը մի պատասխան ունի.
 «Մենք հաստատ դիտենք, վոր մենք անհաղթ ե-
 լի յենք, վորովհետև իմպերիալիստական պատե-
 րազմից մարդկութունը վոչ թե կջարդվի, այլ կտա-
 պալի այդ պատերազմը: Յեւ առաջին յերկիրը, վոր
 ջարդից իմպերիալիստական պատերազմի տաժանելի
 շղթան, մեր յերկիրն եր: Մենք այդ շղթայի
 ջախջախման համար ամենածանր դո-
 հեր ենք տվել, սակայն մենք ջարդել
 ենք այդ շղթան: Մենք իմպերիալիս-
 տական կախվածութունից դուրս
 ենք կանգնած, մենք ամբողջ աշխար-
 հի առաջ բարձրացրել ենք իմպե-
 րիալիզմի լիակատար տապալման դրո-
 շակը»: (Ընդգծումն իմնե. Ս. Բուդյոննիյ. Լենին
 VIII հատոր, յերես 365):

Յեւ ապա. «Մենք պաշարված ամբո-
 ցում ենք գտնվում, քանի մեզ ոգնու-
 թյան չեն հասել միջազգային սո-
 ցիալիստական հեղափոխության այլ
 դորամասերը: Սակայն այդ դորամա-
 սերը կան, նրանք հասունանում, ա-
 ճում, ամբանում են, քանի վոր շու-
 րունակում են իմպերիալիզմի դա-
 դանությունները: Բանվորները խը-
 դում են իրենց կապերը սոցիալա-
 վաճանհերի հետ: Բանվորները գտն-
 դադ, սակայն անշեղորեն, դնում են
 դեպի կոմունիստական բայլը կյան
 դործելակերպը, դեպի սրուկտարական

հեղափոխութեանը, վորը միայն կարող երազանքի կործանովորդ կուլտուրան ու կործանովորդ մարդկու-
թեանը:

Մի խոսքով՝ մենք անհաղթ ենք, վորովհետև անհաղթ եհամաշխարհային պրոլետարական հեղափոխութեանը: (Ընդգծումը իմն է. Ս. Բուդյոննի.— Լենին, հատոր XI, յերես 414):

Այսպես եր գրում է Լյիչը: Յեւ վորպեսզի առաջիկա ճակատամարտներում մենք բավականաչափ ուժ ու միջոցներով ապահովենք մեզ դեպի պրոլետարական հեղափոխութեան հաղթական յերթը, մեզ անհրաժեշտ է դեռևս շատ աշխատանք թափել և միշտ զգաստ լինել:

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԵՐԻՑ ՄԵԿԸ — ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻՆՆ Ե

Խորհրդային Միութեան և իմպերիալիստների մեջ ապագա ընդհարումների ընթացքում հարկավոր ընդդիմադրութեանը նախապատրաստելու գործի մեջ մենք առաջին տեղերից մեկը կոոպերացիային ենք տալիս: Զպիտի մոռանալ, վոր Լենինն իր մի շարք յելույթներում շատ անգամ եկոոպերացիային աշխարհի տեղ հատկացրել: Կոոպերացիան պետք է մեր պրոլետարական պետութեանը բոլոր միջոցներով ոգնի «դառնալու զգուշ, խնայող, շնորհքով գործի տեր», ճշտապահ մեծաքանակային առևտրական, այլապես նա (պրոլետարական պետութեանը) չի կարող մանր-գյուղացիական միջավայրը անտեսապես վտարի վրա

կանգնեցնել, այլապես տվյալ պայմաններում, կապիտալիստական (առայտմա կապիտալիստական) Արևմուտքի կողքին դեպի կոմունիզմ տանող ուրիշ ճանապարհ չկա: Մեծաքանակային առևտրականը--կարծեք դա մի այնպիսի տնտեսական տիպ է, վոր կոմունիզմից այնքան է հեռու, ինչքան յերկինքը յերկրից: Բայց հենց դա մեկն է այնպիսի հակասություններից, վորը կենդանի, իրական պայմաններում մանրագյուղացիական տնտեսությունից պետական կապիտալիզմի միջոցով տանում է դեպի սոցիալիզմ: Անձնական շահագրգռվածությունը բարձրացնում է արտադրությունը: Մեզ անհրաժեշտ է ամենից առաջ և ինչ գնով լինի բարձրացնել մեր արտադրությունը: Մեծաքանակ առևտուրը միացնում է մանր գյուղացիների միլիոնավոր մասսաներ, տնտեսապես շահագրգռելով նրանց, շողկապելով նրանց հենց արտադրության մեջ, հետագայում նրանց ի մի յե համախմբում տարբեր միությունների ու կազմակերպչական ձևերի մեջ: Մենք արդեն սկսել ենք մեր տնտեսական քաղաքականության անհրաժեշտ վերակառուցումը: Մենք այդ բնագավառում արդեն ունենք մի քանի, ճիշտ է վոչ մեծ, մասնակի, սակայն և անվիճելի հաջողություններ: Մենք այդ նոր «գիտության» նոր բնագավառում արդեն ավարտում ենք նախապատրաստական դասարանը: Հաստատակամությամբ ու համառորեն սովորելով, չվախենալով բազմաթիվ անգամ սկսածը նորից սկսել, նորից անել, ուղղելով մեր սխալները և խոր թափանցելով այդ սխալների նշանակության մեջ, մենք հավատացած ենք, վոր կփոխադրվենք հետևյալ դասարանները: Մենք ամբողջ «դասընթացքն» ավար-

տելու յենք, թեև համաշխարհային տնտեսութեան ու համաշխարհային քաղաքականութեան հանգամանքներն այդ դասընթացքը դարձրել են ավելի յերկարատև, ավելի դժվար, քան մենք եյինք կամենում: Ինչ ել վոր լինի, վորքան ել անցողակի շրջանի դժբաղդությունները, սովը, քայքայումը ծանր լինեն, մենք հոգով չենք ընկճվի և մեր գործը կհասցնենք մինչև հաղթական վախճանը: (Ընդգծումն իմն ե. Ս. Բուդյոննի.— Լենին, VIII հատոր, յերես 369):

ՃԱԿԱՏԱՄԱՐՏՆԵՐ ՈՒ ՖՐԱՉՆԵՐ

Յեթե բուրժուական յերկրներում կոոպերացիան կապիտալիստական հասարակակարգի մի յերկրորդական լրացումն ե և կարող ե միայն նվազեցնել, բայց վոչ վերացնել մասնավոր կապիտալի շահագործումը, ապա խորհրդային յերկրում կոոպերացիան սոցիալիստական շինարարութեան գլխավոր գործիքներից մեկն ե: Նա կոչված ե պետական արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան մեջ տնտեսական փոխանակութեանը փոխանցել ու դնել կոոպերատիվ շրջանառութեան ռելսերի վրա:

Նա պետք ե փոխարինի գյուղացու բաժան-բաժան անհատական աշխատանքը կոլլեկտիվի տնտեսական համագործակցութեամբ: Նա պետք ե կերպարանափոխութեան յենթարկի հնուց ձևակերպված կենցաղային սովորութիւնները հասարակական (համայնական) ուղղութեամբ: Նտ պիտի միջոցներ ձեռք առնի մասնավոր կապիտալի վերացման համար: Զպետք ե մոռանալ վոր ս. յ. յ.

«Ամբողջ հարցը նրանումն է, թե ո՞վ ունի այս առաջ կանցնի: Յեթե կապիտալիստները կարողացան ավելի շուտ կազմակերպվել, այն ժամանակ նրանք կը քշեն կոմունիստներին և այլևս խոսելու խնդիրներ չեն մնա: Պետք է այս բաների վրա նայել զգաստ կերպով: Ո՞վ ումը: Կամ պրոլետարական պետական իշխանությունը ընդունակ կլինի, հենվելով գյուղացի-ության վրա, պարոն կապիտալիստներին պահել համապատասխան սանձի տակ, վորպեսդի կապիտալիզմը պետական հունի մեջ դնի և ստեղծի պետությանը յենթարկվող և նրան ծառայող կապիտալիզմ: Այս հարցը պետք է դնել զգաստ: Այս խնդրում ամեն կարգի գաղափարախոսություն, քաղաքական ազատությունների մասին ամեն տեսակի դատողություններ զուք կգտնեք, մանավանդ յեթե դուք նայելու լինեք արտասահմանյան Ռուսաստանին, համար յերկրորդ Ռուսաստանին, վորտեղ ամեն տեսակի քաղաքական կուսակցությունների պատկանող տասնյակ լրագիրներն են հրատարակվում, վորտեղ ամեն տեսակի քաղաքական ազատություններ փառաբանվում են ամեն յեղանակներով և յերաժշտության բոլոր ձայներովը, վոր գոյություն ունեն ընության մեջ: Այդ բոլորը զուտ զրույցներ են, ֆրազաներ, վորոնցից պետք է հրաժարվել կարողանալ:

Մենք այս քանի տարիների ընթացքում շատ լուրջ ճակատամարտներ տեսանք և սովորեցինք, վոր այլ բան է լուրջ ճակատամարտը և այլ բան—դրախոսությունը, շատախոսությունն այդ լուրջ ճակատամարտի մասին, մանավանդ այն մարդկանց կողմից, վորոնք նստած են ճակատամարտից մի կողմ: Պետք

ե այդ ամբողջ գաղափարախոսութիւնից, այդ ամբողջ շատախոսութիւններից հրաժարվել կարողանալ և դործի ելությանը նայել: Իսկ դործի ելութիւնն այն է, վոր կռիվը կա և լինելու յե ավելի ճակատագրական, ավելի դաժան, քան այն կռիվները, վոր յեղել են կուչակի ու Դենիկինի հետ»:

Յեվ ապա.—

«Պրոլետարիատի դիկտատուրան միայն նրանում էի կայանում, վոր մենք տասլալել ենք բուրժուազիային կամ տապալել ենք կալվածատերերին. այդ յեղել և բոլոր հեղափոխութիւնների ժամանակ.—մեր պրոլետարիատի դիկտատուրան հետապնդում է կարգի, աշխատանքի արտադրողականութիւն, գիւսցիպլինայի հաշվառման ու ստուգման, պրոլետարական խորհրդային իշխանութիւն ապահովում. իշխանութիւն, վորն այժմ ավելի ամուր, ավելի հաստատուն է, քան առաջ: Անհրաժեշտ և ստիպել, վոր բոլոր գիտակից բանվորներն ու գյուղացիները իրենց գլխավոր ուժերն այս բանի վրա ուղղեն: Այո, այն վոր մենք տասլալել ենք կալվածատերերին ու բուրժուազիային, մենք ճանապարհը մաքրել ենք, սակայն սոցիալիզմի շենքը չենք կառուցել: Վորովհետև բուրժուական մի սերնդից մաքրված հողի վրա պատմութիւն մեջ նոր սերունդներ են շարունակ յերևան գալիս, միայն թե հողը այդպիսիներին ծնունդ տա: Իսկ հողը բուրժուական է ծնում այնքան: Ինչքան կուզեք: Յեվ նրանք, ովքեր կապիտալիստների պարտութիւն վրա նայում են այնպես, ինչպես մանր սևփականատերերն են նայում.—«Նրանք ճանկեցին, հապա մի յես ել ոգտովիմ».—չի՞ վոր նրանցից յուրաքանչյուրը բուրժուաների նոր

սերունդների աղբյուր ե հանդիսանում: Յերբ մեզ ա-
սում են, վոր աշխատանքային դիսցիպլինայի կիրա-
ռումը՝ կապիտալիստներին ղեկավարելու վերականգն-
ման հետեանքով, իբր թե սպառնալիք ե հեղափոխու-
թյանը, յես ասում եմ. այդ մարդիկ չեն ըմբռնել
հենց մեր հեղափոխության սոցիալիստական բնույթը.
Նրանք հենց այն են կրկնում, ինչը վոր նրանց միաց-
նում ե մանր-բուրժուազիայի հետ, վորը կարգապա-
հությունից, կազմակերպությունից, հաշվառումից ու
ստուգումից այնպես ե վախենում, ինչպես սատանան
խնկից»: (Լենին, XV հատոր, յերես 239—240):

ԴԱՆԴԱՂ, ԲՍՅՑ ՀԱՍՍՏ

Մեր տնտեսական ու կուլտուրական նվաճումնե-
րի ընդհանուր ֆոնի վրա. նվաճումների, վորոնք մեր
յերկրի սոցիալիստական շինարարության ամուր հիմ-
քերն են ձգում, պարզորոշ ե դառնում տնտեսումի
ուժեղի, վերադիր ծախքերի կրճատման, ժողովրդա-
կան տնտեսության, այդ թվում նաև կոոպերացիայի,
րացիոնալացման անհրաժեշտությունը: Այդ անհրա-
ժեշտությունը պահանջում ե վոչ թե «կամպանիական»,
վոչ թե «հարվածային» մոտեցում, այլ յերկարատե,
պահանջում ե այդ խնդիրների գուցե դանդաղ, սա-
կայն շատ հաստատուն, տասն անգամ ստուգված,
լուծում:

Այդ կարևոր խնդիրների շարքումն են. կարմիր
Բանակի ու նավատորմի մարտիկների մեջ կոոպերա-
տիվ աշխատանքի ուժեղացման, ղինվորական ճաշա-
րանների մեջ հասարակայնության ուժեղացման, ղին-

վորական ճաշարանների կոոպերատիվ անկյունների ցանցի լայնացման և այլ խնդիրներ:

Զպետք և առանձին ապացույցների բերել այն բանի համար, վոր այդ հարցերը սերտորեն կապված են ԽՍՀՄ-ի պաշտպանունակության ամրացման, դին-վորական-ժառանգողների կենցաղի բարելավման, Կարմիր Բանակի զոդումը կոոպերացված ազգաբնակու-թյան բազմամիլիոն մասսաների ամրացման հետ:

«Յեթե Ռուսաստանի մասին տուում եյին, վոր նա չի կարող պատերազմել, վորովհետև նա չի ունե-նալու սպաներ, ապա մենք չպլտի մոռանանք այն, ինչ վոր ասում եյին հենց այդ բուրժուական սպանե-րը դիտելով կերենսկու և Կալեդինի դեմ կովող բան-վորներին. «այս, այս կարմիր գվարդիականները տեխ-նիքական տեսակետից վոչ մի բանի պետք չեն, սա-կայն, յեթե այդ մարդիկ մի քիչ սովորեյին, ապա նը-րանք կունենային անհաղթելի բանակ»: Վորովհետև համաշխարհային կովի պատմության մեջ Բանակի-մեջ մտիկ են այնպիսի տարրեր, վորոնք իրենց յետևից բերում են վոչ թե «կադրոննի» կոչումներ, այլ վորոնց ղեկավարում և շահագործվողների ազատագրության համար կովի գաղափարը: Յեվ յերբ մեր սկսած աշ-խատանքը վերջացած լինի, Ռուսական Խորհրդային Հանրապետությունն անհաղթելի կլինի»: (Լենին, XV հատոր, յերես 80 - 81):

Յեվ ապա...

«Ամեն մի հեղափոխություն միայն այն ժամա-նակ վորևե արժեք ունի, յերբ նա կարողանում է պաշտպանվել, սակայն հեղափոխությունը միանգու-

մից չե վոր պաշտպանվել ե սովորում: Հեղափոխու-
թյունը միլիոնավոր բանվորների արթնացումն ե դե-
պի նոր կյանք: Փետրվարին ու մարտին այդ միլիոն-
ները չգիտեյին թե ինչի համար են նրանք գնում
շարունակելու այն սպանողը, վորի մեջ նրանց ձգել էյի
թագավորներն ու կերենակիները և վորի նպատակը
մերկացրվեց միայն դեկտեմբերին բայլչիկյան կառա-
վարության կողմից: Նրանք պարզ հասկանում էյին,
վոր այդ պատերազմը նրանցն էր և հարկավոր էր
մոտ կես տարի, վոր բեկումը տեղի ունենար: Այժմ
այդ բեկումը կատարված է. նա փոփոխում ե հեղափո-
խության ուժը: Մասսաները, հողնած ու քայքայված
չորսամյա պատերազմից, փետրվարին ու մարտին
խաղաղություն ու պատերազմի դադար են պահան-
ջում: Նրանք հնարավորություն չունեյին հարց դնել,
թե ինչի համար ե պատերազմը: Յեթե այդ մասսա-
ներն այժմ նոր դիսցիպլինա յեն ստեղծել հարմիր
Բանակում, վոչ թե փայտի դիսցիպլինա, կալվածատի-
րական դիսցիպլինա, այլ բանվորական ու դյուզացիա-
կան խորհուրդների դիսցիպլինա, յեթե նրանք այժմ
գնում են մեծագուշն ինքնադոհողությունների, յեթե
նրանց մեջ նոր համախմբում ե առաջացել, ապա այդ
այն պատճառով, վոր առաջին անգամ տասնյակ միլի-
ոնների դիտակցության մեջ ծնվում ե և ծնվել ե նոր
սոցիալիստական դիսցիպլինա, ծնվել ե հարմիր Բանա-
կը: Նա ծնվել ե միայն այն ժամանակ, յիրք այդ
տասնյակ միլիոն մարդիկն իրենց սեփական փորձով
տեսան, վոր կալվածատերերին ու կապիտալիստներին
նրանք իրենք են տապալել, վոր կառուցվում ե նոր
կյանք, վոր նրանք իրենք են այդ նոր կյանքը կա-

ուսցում և վոր նրանք այդ կյանքը կկատուցեն, յեթե
 ստարյերկրյա արշավանքը չխանդարի»։ (Լենին, XV
 հատոր, յերես 339—340)։

«Մենք պետք և հաղթենք վոչ միայն սպիտակ
 գլխարկահաններին, այլ և համաշխարհային իմպերիա-
 լիզմին»։ Մենք պետք և հաղթենք և կհաղթենք վոչ
 միայն այս, այլ և ավելի գործուրելի թշնամուն»։ Դրա
 համար ամենից շատ կարմիր Բանակն և հարկավոր
 թ ո ղ ԽՍՀՄ-ում ամեն մի կազմակեր-
 պ ու թ յ ու շ ն առաջին տեղը գնի րանա-
 կի հարցը։ Ներկայումս, յերբ ամեն ինչ հաս-
 տատվել և, առաջին պլանումն և պատերազմի, բանա-
 կի ամբացման խնդիրը։ Մենք լիակատար կերպով
 համոզված ենք, վոր մենք հակահեղափոխությանը
 վերջ կտանք։ Մենք պիտենք, վոր մենք ուժ ունենք,
 սակայն մենք պիտենք նաև, վոր անգլո ֆրանսիական
 իմպերիալիզմը մեզնից ավելի յե ուժեղ և ցանկա-
 նում ենք, վորպեսզի այդ բանը վորոշակի գիտակցին
 բանվորական մասսաները։ Մենք ասում ենք. «պետք
 և բանակը 10 անգամ և ել ավելի ուժեղացնել, խոսել
 այն մասին, վոր ավելի ևս ամբացվի դիպրիպլինան և
 վորպեսզի գիտակից, լուսավորված, կազմակերպված,
 իսկական պարագլուխները տասն անգամ ավելի ու-
 շաղբություն ու հոգատարություն ցուցարերին այդ
 ամմանը»։ (Լենին, XV հատոր, յերես 441—442)։

ՎՈՉ ԹԵ ՄԻԼԻՏԱՐԻՉՄ, ԱՅԼ ՍՈՑԻԱԼԻՉՄ

Պետք և սովորել դասավորել աշխատանքը Լենինի
 որինակով։ Պետք և այնպիսի զրություն ստեղծել,

վոր մեր կոոպերատորները վոչ մի դեպքում չմտա-
նան տեղերի գինվորական մասերի կարիքներն ու պա-
հանջները: Այս խնդիրը բոլորովին որինական եւ Այս
դեռ քիչ եւ Լնդհանուր ուժերով մենք պետք է նա-
խապատրաստենք համապատասխան կոոպերատիվ
ձեռնարկներ կարմիր Բանակին ապագա պատերազմա-
կան պարագաներում սպասարկելու համար: Թող կոո-
պերացիայի յուրաքանչյուր գրագիտ անգամ յուրացնի,
վոր դեռևս շեան հիմար մարդիք, վորոնք ազմուկ են
անում կարմիր միլիտարիզմի մասին. դրանք քաղա-
քական սինլքորներ են (մաշեննիկներ), վորոնք այն-
պես են ձեացնում, իբր թե նրանք այդ հիմարու-
թյանը հավատում են և նման մեղադրանքներ են
շարտում աջ ու ձախ, ոգտվելով դրա համար իրենց
փաստաբանական ընդունակությամբ՝ կեղծ պատճառա-
բանություններ ստեղծել և մասսաների աչքերին թող
փչել: Մենշևիկներն ու եսերները բղավում են. «Տե-
սեք, ձեզ սոցիալիզմի փոխարեն կարմիր միլիտարիզմ
են տալիս»:

Քիսկապես, զարհուրելի հանցանք: Ամբողջ աշ-
խարհի իմպերիալիստները հարձակում գործեցին ուռ-
սական հանրապետության վրա, վոր խեղդեն նրան, իսկ
մենք ստեղծել ենք մի բանակ, վորն առաջին անգամ
պատմության մեջ գիտե թե ինչու համար է նա
կռվում և ինչու համար է զոհեր տալիս, և վորը հա-
ջողությամբ ընդդիմադրում է ավելի բազմամարդ
թշնամուն, մոտեցնելով համաշխարհային հեղափոխու-
թյունը ընդդիմադրության յուրաքանչյուր ամսին մին-
չև այժմս չտեսնված ծավալով — և այս դատապարտ-
վում է վարպես կարմիր միլիտարիզմ»:

կրկնում եմ. կամ դրանք հիմարներ են, վորոնք վոչ մի քաղաքական գնահատման չեն յենթարկվում, կամ քաղաքական սինլքորներ (մաշնհնիկներ) յենն: (Լենին, XVI հատոր, յերես 68—69):

ՊԱՏԵՐԱԶՄ — ՊԱՏԵՐՍՉՄԻՆ

Վերջին տարիների պատմությունը ցույց հաս-
լիս, վոր Խորհրդային Միությունը կռիվ և վարում
դինաթափման, բանակի կրճատման, խաղաղության
համար: Մենք միատեսակ կռիվ ենք մղում ինչպես
կապիտալիզմի, նույնպես և միլիտարիզմի դեմ, վո-
րոնց ներքին կախումը մեկը մյուսից մեկ համար կա-
տարելապես պարզ և, սակայն մեր պենքը կապիտա-
լիզմի դեմ անհամեմատ ավելի սուր և այն պենքից,
վոր մենք գործ ենք ածում միլիտարիզմի դեմ: Վոչ
այնքան պարզ ու վորոշ, վորքան առաջին մեջ, վեր-
ջինիս մեջ մենք տեսնում ենք պատմական զարգաց-
ման անխուսափելի հետևանքը: Մենք նրա ուժերը
թերազնահատում ենք և միլիտարիզմը կարողանում և
այդ փառահեղ կերպով ողտազործել: (Փ. Մերինգ.
«Очерки по истории войны и военного искусства»
յերես 310):

Բայց դրն հետ միասին մենք շատ լավ գիտենք,
վոր պատերազմն անխուսափելի յե, վոր նա ռդասա-
կարգային հասարակության մեջ վերջին ինստանցիա-
յում կանոնավորում և տարբեր ազգերի ու պետու-
թյունների շահերի ընդհարումները—այդ նշանակում
և այն ժամանակ, յերբ նրանք այն աստիճան են
սրվել, վոր արդեն անկարելի յե վորևի խաղաղ համա-
ձայնություն» (նույն տեղում, յերես 310):

Այսամեղից ել հասկանալի չէ, վոր ժառանց Սո-
ցիալիստական Հանրապետութեան պիմում պաշտ-
պանութեան մենք գոյութեան տենենալ չիլինք կարող:
Տիրապետող դասակարգը վոչ մի պեպքում իր իշխա-
նութեանը ճնշված դասակարգին չի տալ Սակայն
ճնշված դասակարգը պետք է գործով ցույց տա, վոր
նա վոչ միայն ընդունակ է տապալել շահագործողնե-
րին, այլև կազմակերպել ինքնապաշտպանութեան
համար ամեն ինչ գոհելով: Միշտ մենք ասել ենք, թե
պատերազմ է կա պատերազմ: Մենք դատապարտել
ենք իմպերիալիստական պատերազմը, սակայն ընդ-
հանրապես պատերազմը չենք բացասել: Այն մարդիք,
վորոնք վորձել են մեզ միլիտարիզմի մեջ մեղադրել,
շիթիվել են, և յերբ ինձ վիճակից կարգալ էերնի
կոնֆերենցիայի մասին հաշվառվութեանը, յերբ կա-
ռուցկին գործածեց այնպիսի արատահայտութեան. վոր
բայլը կիկնորի մոտ վոչ թե սոցիալիզմ է, այլ միլիտա-
րիզմ, — յես միայն մղտայի ու ձեռքերս թոթվեցի...

Կարծես թե իսկապես պատմութեան մեջ յեղել
է գոնե մի խոշոր հեղափոխութեան, վորը կապ չի
ունեցիլ պատերազմի հետ: Ի հարկէ, վոչ: Մենք աս-
բում ենք վոչ միայն պետութեան մեջ, այլև պետու-
թեաններէ սխտամի մեջ: Յեւ թորհրդային Հանրա-
պետութեան իմպերիալիստական պետութեաններէ
կողքին տեական ժամանակով գոյութեանն անյերե-
վակայելի չի: Վերջ ի վերջո կամ մեկը կամ մյուսը
կհաղթի»: (Լենին, 1919 թ. 18 մարտ):

Յեւ յիթի այդ այգպես և, տեսնենք թե ինչ
դրութեան մեջ է մեր յերկրի նախապատրաստումն
ապագա պատերազմին:

ԱՄԲՈՂՁ ՅԵՐԿԻՐԸ ՊԵՏՔ Ե ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Կուսակցությունն ու Խորհրդային իշխանությունը, ինչպես յես այս մասին խոսել և՛մ նախորդ յերեսներում, ամեն ջանք գործ են դնում ամրացնելու Կարմիր Բանակի մարտական կարողությունը, ավիացիայի զարգացումը, քիմիական պաշտպանության գործը: Պաշտպանության ամրացման գործում մենք արդեն մեծ նվաճումներ ունենք: Բանակի և նավատորմի ղի մարտական նախապատրաստությունը բարձրացել է: Մեր ուղային տորմիղը 1920 թվից ավելի քան չորս անգամ աճել է և այժմ իրենից լուրջ ուժ է ներկայացնում: Մենք շինում ենք ինքնաթիռներ և նրանց համար մոտորներ (շարժիչ մեքենաներ) ենք պատրաստում մեզ մոտ, մեր սեփական գործարաններում: Մեր արտագրած ինքնաթիռները փայլուն կերպով արտասահմանյան ինքնաթիռների հետ մրցակցել են կարողանում:

Բայց այդ նվաճումները հերիք չեն: Անհրաժեշտ է ուժեղացնել Կարմիր Բանակի ու նավատորմի ամրացման հոգատարությունը: Թշնամուն ընդդիմադրելու համար պետք է պատրաստվի ամբողջ յերկիրը, ըստր աշխատավոր ազդարնակությունը:

Ժամանակակից պատերազմի մեջ մասնակցում են բազմամիլիոն մասսաներ: Այսպես, ցարական կառավարությունը իմպերիալիստական պատերազմի ժամանակ զենքի տակ եր դրել 14 միլիոնից ավելի մարդ: Ապագայի պատերազմը ևս պահանջելու յե մարտիկ-

ների ամբողջ միլիոններ: Նրանց պետք է պատճառա-
տել գեռ մինչև պատերազմը՝ խաղաղ ժամանակին:

Ներկայիս պատերազմի միջոցների ու յեղա-
նակների մեջ մեծ զանազանություն չկա ճակատի և
թիկունքի մեջ: Հեռվից խփող թնդանոթները, ողա-
տորմիղը և զինվորական գազերը կարող են այժմ
մեծ մլաս հասցնել նույնիսկ ճակատից շատ հեռու
գտնվող թիկունքին: Այդ պահանջում է, վոր ամբողջ
ազգաբնակչությունը ծանոթ լինի զինվորական դործի
հետ, իմանա թե ինչպես պիտի պաշտպանվել զազե-
րից, թագնվել ինքնաթիռներից, ինչպիս եղնել ճա-
կատին հողթություն տանելու համար:

Յիվ հինց դրա համար է, վոր մեծ աշխատանք
պիտի տանել բանվորազյուզացիական մասսաներին
ծանոթացնելու զինվորական գործի հետ, նրանց ներ-
գրավելով յերկրի պաշտպանության գործին: Բոլոր
կոոպերատորները պետք է այս լավ հիշեն: Նրանք
պետք է ակտիվ սզնություն ցույց տան յերկրի
պաշտպանության նախապատրաստելու աշխատանքին,
վորի ամբացման համար պետք է անել ամեն ինչ, ինչ
վոր հնարավոր է: Պիտք է լայնացնել զինվորական անկ-
յունների թիվը, մասնակցել վերջինների աշխատան-
քին, ոգնել մինչգինակոչային և յերկրային շինարա-
րության նախապատրաստությանը, զարկ տալ գյու-
ղում հրացա՝ աճ լության գործին, ոգնել ՊԱՋԸ-Ավիո-
քիմի աշխատանքներին և այլն:

Այս կերպ պետք է գիտվեն Լենինի ավանդները
կարծիր Բանակի ու կոոպերացիայի մասին: Վ. Ի.
Լենինը կոչ է անում բանվորներին ու գյուղացիներին
ևտալ բոլոր ուժերը, բոլոր միջոցները, բոլոր

